VEOLIA
Ջուր

«31» հունվարի 2022թ.

№ ՄԵ/1953

Հարգելի՛ տիկնայք և պարոնայք,

«Վեոլիա Ջուր» ընկերությունը մանրամասնորեն ուսումնասիրեց https://www.ecolur.org/ կայքում հրապարակված նյութը՝ Ջրվունի գյուղում ջրի հնարավոր աղտոտման, ինչպես նաև այս առնչությամբ ձևակերպված հարցմանը պատասխանի բացակայության վերաբերյալ:

Սույն տեղեկության ստացումից ի վեր մեր ընկերությունը բազմաթիվ ստուգումներ է իրականացրել, և ուրախ ենք տեղեկացնել, որ նշված տարածքում ջրի որակը լիովին համապատասխանում է սանիտարահամաճարակային պահանջներին և չափանիշներին:

Ընդունված նորմերին համապատասխան՝ «Վեոլիա Ջուր» ընկերությունը պարբերաբար ստանում է Հայաստանի առողջապահության նախարարության հետ համատեղ իրականացվող մոնիտորինգի արդյունքում հավաքագրված ջրի որակի վերաբերյալ տեղեկատվություն: Ձեր ուշադրությունն ենք հրավիրում նաև այն փաստի վրա, որ Հայաստանի ջրային կոմիտեից ստացված անկախ մոնիտորինգի տվյալների համաձայն ևս՝ Ջրվունի գյուղում խմելու ջրի որակի շեղումներ չեն արձանագրվել:

Ինչ վերաբերում է կոնկրետ հասցեով՝ Երևան, Ջրվունի 38, շենք 2, իրավիճակին, ապա ձեր ուշադրությանն ենք ներկայացնում, որ 29.12.2021թ.-ին անմիջապես տիկին Նելլի Գուրգենյանի բնակարանում վերցված նմուշների (գրավոր հարցում, գործ 290807) ուսումնասիրությունը ցույց է տվել, որ այն լիովին համապատասխանում է ՀՀ առողջապահության նախարարության կողմից նշված նորմերին: Անհրաժեշտության դեպքում մենք պատրաստ ենք տրամադրել հարակից բոլոր փաստաթղթերը: Նույն վայրում 17.01.2022թ.-ին կատարված թեստերը նույնպես ցույց են տվել պահանջվող չափանիշներին լիարժեք համապատասխանություն:

ՀՀ ԵՐԵՎԱՆ «ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ
ԵԼԻՑ 1953
«31» 01 20 22

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Աբովյան 66ա
Հեռ.՝ 1-85, 0-800-00-185, 011-300-184
էլ.փոստ՝ office@vjur.am
Կայք՝ www.veolia.am

Address: RA, Yerevan, 0025, str. Abovyan 66a build.
Tel.: 1-85, 0-800-00-185, 011-300-184
E-mail: office@vjur.am
Website: www.veolia.am

Իսկ ինչ վերաբերում է տիկին Սուխուդյանի հաղորդած խնդիրներին, ապա վերջիններս կապված են մեկանգամյա վթարի հետ, որի հետևանքները հնարավորինս արագ վերացվել են՝ վնասված հատվածում 25 մետր խողովակները ամբողջությամբ փոխարինելով: Սույն տարվա հունվարին այս վթարի հետ կապված բոլոր տներում ամբողջությամբ փոխվել են ֆիլտրերը:

Ուրախ ենք տեղեկացնել նաև, որ վերջերս ընդունված որոշման համաձայն, ընթացիկ 2022 թվականի առաջին վեց ամիսների ընթացքում Զովունի գյուղի մոտ նոր գծերի կառուցման համար կներդրվի 350 մլն դրամ, ինչը վերջնականապես կլուծի ջրամատակարարման և ջրի որակի հետ կապված բոլոր խնդիրները:

Շնորհակալություն ենք հայտնում զգոնության համար և պատրաստ ենք պատասխանել ջրի որակի և ջրամատակարարման հետ կապված ցանկացած հարցի: «Վեոլիա Ջուր» ընկերությունը շարունակում է ինտենսիվ աշխատանքը ջրամատակարարման համակարգի արդիականացման և ծառայությունների որակի՝ միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու ուղղությամբ:

Հարգանքներով՝ Գլխավոր տնօրեն

Մ. Շահինյան